այն ժամանակ, երբ տէրտէրը նոյնպէս աղօթում է: Եկեղեցու պատերից դուրս՝ նա աստծուն չէ մտաբերում:

Շտապելուց ես մոռացայ մինչեւ անգամ կոճակներս կցել: Ասլանը խոստացել էր այն օրը ցոյց տալ ինձ մեր Հայկ Նահապետի բերդը: Իմ սիրտը տրոփում էր անհամբերութիւնից, թէ երբ պէտք է տեսնէի Հայաստանի առաջին ամրոցը, որ մնացել էր այն օրից, երբ հայութեան սկիզբը դրոեցաւ:

Երբ ձի նստեցինք, ճանապարհ ընկանք, Արթինի խոստացած երկու ձիաւորները, բոլորովին զինուած, մեր առջեւով գնում էին, թէ որպէս առաջնորդ եւ թէ որպէս զինակից: Նրանք սկզբից մեզ զգուշացրին, թէ վտանգաւոր տեղերից պէտք է անցնենք: Ես կատարեալ զինավառութեան մէջ էի, Ասլանը նոյնպէս ունէր իր հետ մի զոյգ ատրճանակ: Չգիտեմ ինչո՞ւ սաստիկ փափագում էի ես, որ աւազակների հանդիպէինք: Այնքան խօսոել էր դրանց մասին, այնքան բանէր էի լսել, բայց երբեք աւազակ չէի տեսել:

Գիշերով եկած լինելով, ես դեռ բոլորովին չէի դիտել Հայոց-ձորը: Երբ լոյսը ծագեց, երբ արեւի առաջին ճառագայթները սկսեցին ոսկեզօծել լեռների մառախլապատ կատարները, այդ ժամանակ միայն հանդիպեցաւ իմ առջեւ գեղեցիկ հովիտը իր շքեղ տեսարաններով: Ես հիացած էի, եւ իմ հիացմունքը մեծանում էր այն չափով, որքան բնութեան գեղեցկութիւնները միախառնւում էին անցեալի, ամենահին անցեալի յիշատակների հետ: Ինչե՜ր չէր տեսել այդ հովիտը, ի՜նչ սխրագործութիւնների վկայ չէր եղել նա: Այստեղ մեր Հայկ Նահապետը պատերազմեց Բէլի բռնակալութեան դէմ եւ խորտակեց ամբարտաւան հսկայի զօրութիւնը: Այստեղ, Հազկերտի կրօնական հալածանքների ժամանակ, հայ կինը մահակը ձեռին, հայ շինականը զինուած իր մանգաղով, առաջին բողոքը բարձրացրին խղճի բռնաբարութեան դէմ եւ, յարձակոելով պարսից մոգերի վրայ, ջարդեցին նրանց, եւ կրակ տալով նոր հիմնուած բոլոր ատրուշաններին եւ մոխիրը ածելով ծովի մէջ, մաքրեցին իրանց հայրենիքը այդ պղծութիւնից: Ասլանը ինձ ցոյց տոեց հին Մոխրաբերդը ծովի մօտ, որ այժմ մի գիւղ էր. այստեղից ածեցին ծովի ալիքների մէջ հրդեհուած ատրուշանների եւ որմզդական մշտավառ կրակի մոխիրը եւ այդ պատճառով կոչոեցաւ Մոխրաբերդ:

Հայոց-ձորում դրոեցաւ քրիստոնէութեան սկիզբը՝ մեր Աբգար թագաւորի օրով: Ասլանը այդ մասին շատ բաներ էր պատմել ինձ, ինչ որ գրուած էր գրքերի մէջ: Բայց ես սիրում էի ժողովրդի պատմածը, կենդանի ժողովրդի պատմածը, որ նա աւանդաբար լսել էր իր նախորդներից: Ես կը դնեմ այստեղ այդ աւանդութիւնը, աւելի այն պատճառով, որ նրանով բացատրւում է Անգղ գետի անոան ծագումը: Այսպէս է պատմում ժողովուրդը: